«Հաստատում եմ»
«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
տնօրենի ԺՊ Ե. Սերոբյան
«31» օգոստոսի 2020թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության

Սարգիս Վանյայի Փահլևանյանի <<Ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիայի մշակման գիտատեսական հիմունքները>> խորագրով թեկնածուական ատենախոսության մասին՝ ներկայացված է ԺԳ. 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

«Ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիայի մշակման գիտատեսական հիմունքները» թեմայով ատենախոսության արդիականությունը պայմանավորված է արդի ժամանակաշրջանում ֆիզիկական կուլտուրայի և դաստիարակության դերի բացառիկ նշանակությամբ ազգային անվտանգության, սոցիալ-տնտեսական անվտանգության ապահովման, հասարակության առողջության պահպանման, ամրապնդման, վերարտադրության հետ կապված խնդիրների բարեհաջող լուծման անհրաժեշտությամբ: Այս համատեքստում առաջադրված է նաև ժամանակակից կրթության որակի և արդյունավետության բարձրացման խնդիրը: Այս տեսանկյունից չափազանց մեծ կարևորություն է ստանում ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության գործընթացի կազմակերպումը, քանի որ ավագ դպրոցական տարիքում ավարտին է մոտենում անձի ֆիզիկական զարգացումը, տեղի է ունենում ինքնագիտակցության զարգացում, աշխարհայացքի ձևավորում, ավելի արդյունավետ ձևով զարգանում է ինքնահսկողությունը, նկատվում է ինքնադաստիարակության միտում, որոնք նպաստում են սովորողի ինքնուրույն

կյանքի համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ապահովմանը՝ ելնելով անձի, հասարակության և պետության շահերից:

Կատարված հետազոտությունը վերաբերում է ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիայի մշակմանն ուղղված ուսումնասիրություններին, ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիայի գիտատեսական հիմունքների մշակմանը:

Աշխատանքի ներածությունում հիմնավորվում է հետազոտության արդիականությունը, ներկայացվում են հարցի վերաբերյալ մեթոդաբանական, տեսական և կիրառական մակարդակներում արձանագրված հակասությունները, որոշված է հետազոտության նպատակը, առանձնացված է հետազոտության օբյեկտը, առարկան: Ներկայացված է թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության գիտական վարկածը, ձևակերպված են հետազոտության խնդիրները, ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, աշխատանքի ընթացքում օգտագործված մեթոդները, իրականացման փուլերը: Որոշակիացված է հետազոտության գիտական նորույթը, առանձնացված են գիտական նորույթի տեսական և գործնական արդյունքները, առաջադրված են պաշտպանության ներկայացվող դրույթները, հիմնավորված է հետազոտության հավաստիությունը, ներկայացված է հետազոտության փորձաքննությունը, կառուցվածքը: Նշենք, որ հետազոտության բոլոր բաղադրատարրերը բխում են գիտական հետազոտության տրամաբանությունից և պայմանավորված են մեկը մյուսով:

Ատենախոսության առաջին գլուխը, որը կրում է <<Ֆիզիկական դաստիարակության և սպորտի միջոցով ՀՀ ազգաբնակչության ֆիզիկական և հոգեկան առողջության հիմնախնդրի մշակման և լուծման մեթոդաբանական հիմունքները>> խորագիրը, բաղկացած է երեք ենթագլխից, որտեղ քննարկվում է ֆիզիկական դաստիարակության դերը Հայաստանի ազգաբնակչության ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովման գործում, ներկայացված է բնակչության առողջական վիճակը բնութագրող ուշագրավ վիճակագրություն, հայտնի գիտնականներ Ի. Գունդարովի, Մ. Էրիկսոնի, Վ. Ռայխի, Ա. Լոուենի, Ի. Ռոլֆի, Վ. Ռայխի մոտեցումներն ու վերլուծություններն անձի հոգեբանական, ֆիզիկական առողջության

վերաբերյալ: Արված ուսումնասիրությունների արդյունքում հեղինակը սեփական տեսակետն է ներկայացնում ֆիզիկական դաստիարակության հոգեբանա-առողջարարարական ներուժի արդյունավետ իրացման համար, կարևորելով մարմնական և հոգեբանական գործընթացների միջև կապը: Ատենախոսը համարձակորեն ֆիզիկական դաստիարակությունը դիտարկում է որպես երիտասարդության ակտիվության բարձրացման գործոն և ուսումնասիրում է դրա ազդեցության նշանակությունը Հայաստանի տնտեսության վրա: Հետազոտողն իրավացիորեն անձի առողջության պահպանումը որպես ժամանակակից կրթության նորարարական հայեցակետ է ներկայացնում և առաջադրում է առողջության պահպանման նորարարական քաղաքակության բաղադրիչները: Արված են եզրակացություններ առաջին գլխի վերաբերյալ:

Աշխատանքի երկրորդ՝ <<Ֆիզիկական կուլտուրայի ձևավորման տեխնոլոգիան ավագ դպրոցում>> խորագիրը կրող գլխում հեղինակն ուսումնասիրում է ավագ դպրոցականների տարիքային առանձնահատկությունները, դրանց հաշվառման անհրաժեշտությունը ֆիզիկական դաստիարակության գործընթացում, ինչպես նաև ֆիզիկական դաստիարակության մեթոդիկայի, տարբեր մեթոդների առանձնահատկությունները: Ատենախոսը քննարկում է մանկավարժության մեջ <<տեխնոլոգիա>> հասկացության բովանդակության և ծավալի հստակեցման խնդիրը, ուսումնասիրում է տարբեր մեթոդներ և բացահայտում է դրանց կիրառման տեխնոլոգիաները: Տրամաբանորեն հիմնավորված է ֆիզիկական կուլտուրայի ձևավորման տեխնոլոգիաների, ֆիզիկական դաստիարակության գործընթացում նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների ներդրման վերաբերյալ արված ուսումնասիրությունները, գնահատելի է առողջության վերաբերյալ արված համապարփակ ուսումնասիրությունները, վերլուծությունները:

Ատենախոսության երրորդ՝ <<Որովայնային մամլակի մկանային համակարգի զարգացման տեխնոլոգիայի ստեղծումը և կիրառումը ֆիզկուլտուրայի դասերին>> խորագիրը կրող գլխում հիմնավորվում է ավագ դպրոցի սովորողների համար որովայնային մամլակի նշանակությունը, քննարկվում է նրա զարգացման ապահովումը՝ ինքնուրույն մարզումների միջոցով, տրվում են ինքնամարզմանը

վերաբերող հանձնարարականներ: Ուշագրավ է ավագ դպրոցի աշակերտուհիների որովայնային մամլակի տարածված թերզարգացվածության հարցի քննարկումը և դրա կանխման ու վերացման միջոցների առաջադրումը, տրվում է որովայնային մամլակի մկանների զարգացումն ապահովող տեխնոլոգիական միջոցների նկարագիրը, մարզասարքի կառուցվածքը, մարզասարքերի օգտագործման հնարավորությունները: Այս գլխում ներկայացված են ֆիզիկական դաստիարակության մշակված ժամանակակից տեխնոլոգիայի արդյունավետությանը վերաբերող փորձարարական աշխատանքները: Ատենախոսությունն ավարտվում է եզրակացություններով, որտեղ ամփոփված են կատարված հետազոտական աշխատանքի արդյունքների վերաբերյալ եզրահանգումները:

<<Ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիայի մշակման գիտատեսական հիմունքները>> խորագրով թեկնածուական ատենախոսությունը ամբողջական համակարգված գիտահետազոտական աշխատանք է, որի արդյունքները կարելի է ընդհանրացնել և կիրառել ֆիզիկական դաստիարակության բնագավառում:

Նշենք մի քանի նկատառումներ հետազոտական աշխատանքի իրականացման վերաբերյալ.

1. Առողջապահական ոլորտում արված ուսումնասիրությունները հիմնականում իրականացվել են Լոռու մարզում (1.1), կարելի էր այլ մարզերում ևս այդ հարցերի ուսումնասիրություններին անդրադառնալ. դրանք համեմատել, և հիմնավորել ստացված արդյունքները:

2. Կարծում ենք աշխատանքի կառուցվածքում կարելի էր հավելված ներառել, որտեղ կարելի էր տեղադրել աշակերտուհիների որովայնային մամլակի մկանային համակարգի զարգացման վարժությունների կատարմանը վերաբերող նկարներ՝ առավել մանրամասն ներկայացնելով յուրաքանչյուր վարժության նշանակությունը, ինչպես նաև այլ նկարներ. (նկար 2,3):

3. Աշխատանքի փորձարարական մասում վարժությունների կատարման ցուցանիշները կարելի էր ներկայացնել նաև տրամագրերի տեսքով, առավել պատկերավոր ներկայացնելու նպատակով:

4. Կարծում ենք փորձարարական մասում կարելի էր անկետան (հարցաթերթիկը) ամբողջությամբ ներկայացնել, այլ ոչ միայն հարցերը և պատասխանողների թիվը:

5. Աշխատանքում կան լեզվառճական որոշ անհարթություններ:

Նշված նկատառումները չեն ստվերում կատարված գիտահետազոտական աշխատանքը, այն էական նշանակություն ունի մանկավարժության գիտության բնագավառում, մասնավորապես ժամանակակից պայմաններում ֆիզիկական դաստիարակության իրականացման, սովորողի առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման, ինքնակրթության կազմակերպման տեսանկյունից:

Սարգիս Վանյայի Փահլևանյանի <<Ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիայի մշակման գիտատեսական հիմունքները>> խորագրով թեկնածուական ատենախոսությունը ծանրակշիռ փոփոխություններ է ներմուծում ֆիզիկական դաստիարակության իրականացման, տեխնոլոգիաների կիրառման գործընթացներում, այն համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և իր՝ ԺԳ.00.01 (Մանկավարժության տեսություն և պատմություն) մասնագիտական թվանիշին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է 2020 թվականի 31օգոստոսի մանկավարժության ամբիոնի թիվ 01 նիստում:

Ամբիոնի նիստին մասնակցել են մանկ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռ. Մարդոյանը, Ա. Մկոյանը, Ս. Սողոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, մանկ. գիտ. թեկնածու Լ. Միքաելյանը, Ա. Յայլոյանը, Ն. Գրիգորյանը, Շ. Ալեքսանյանը, բանասիր. գիտ. թեկնածու Լ. Գևորգյանը, դասախոսներ Մ. Խաչատրյանը, Ի. Շուխյանը, Լ. Բաղդասարյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ,

մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյան

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ Լ. Ղուկասյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՊՀՊ գիտքարտուղար Կ. Պետրոսյան